ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գևորգ Հովիկի Մարտիրոսյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ռազմավարական հաշվառման ներդրման հիմնախնդիրները ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Գևորգ Հովիկի Մարտիրոսյանի ատենախոսությունը նվիրված է ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպություններում ռազմավարական հաշվառման համակարգի ներդրման հետ կապված խնդիրների վերհանմանը և այդ համակարգի կողմից իրականացվող գործառույթների շրջանակին:

Ռազմավարական հաշվառումը իր որոշ գործառույթներով ունի նմանություններ կազմակերպություններում կիրառվող կառավարչական հաշվառման հետ: Ատենախոսը նշում է, որ մասնագիտական գրականությունում ավարտուն տեսքով չի ներկայացվում ռազմավարական հաշվառման մեթոդաբանությունը: Այդ պարզաբանումները անհրաժեշտ են հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը օգտագործողներին հասկանալի դարձնելու համար, թե ինչպես են կազմակերպության գործարարության ոլորտում հնարավորություններ ընձեռնվում կայուն զարգացման ուղղությամբ:

Ռազմավարական հաշվառման համակարգի մշակման և ներդրման հիմնախնդիրների քննարկումներն իրենց մեկնաբանություններն են ստացել ինչպես հայազգի, այնպես էլ արտասահմանյան հեղինակների կողմից: Սակայն տվյալ որորտի բարելավմանն ուղղված վերոնշյալ հիմնախնդիրները դեռևս իրենց խորքային լուծումները չեն ստացել սննդի արդյունաբերության կազմակերպությունների հաշվապահական հաշվառման համակարգում, ինչն էլ հիմք է հանդիսացել գիտական հետազոտության նպատակի ընտրության և դրա առջև դրված խնդիրների լուծման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմավարական հաշվառման համակարգի ներդրումը ներկայացվել է սննդի արդյունաբերության կազմակերպությունների օրինակով՝ հեղինակն աշխատանքում առանձնացրել է ռազմավարական հաշվառման համակարգի ներդրման հետ կապված

հիմնախնդիրները և դրա կողմից ուսումնասիրվող տեղեկատվական դաշտը, դրա համատեղ փոխգործակցությունը ֆինանսական հաշվառման համակարգի հետ և այդ համակարգի դերը կազմակերպությունների գործունեության կայուն զարգացման արդյունքների ներկայացումը ինտեգրված ֆինանսական հաշվետվության օրինակով:

Նշված խնդիրների գիտական հետազոտմանը և լուծումների մշակմանն ուղղված Գևորգ Հովիկի Մարտիրոսյանի ատենախոսությունը համարում ենք արդիական, իսկ արդյունքները՝ կարևոր:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է կատարել առաջարկություններ ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպություններում ռազմավարական հաշվառման ներդրման հիմնախնդիրների լուծման ուղղություններով:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել առանցքային գործոններ, որոնք ձևավորում են սննդարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների զարգացման ռազմավարական ուղղությունները,
- բացահայտել ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների միջև ռեգրեսիոն փոխկապակցվածություններ, որոնք կարող են երկարաժամկետ կտրվածքով ցույց տալ այդ ցուցանիշների միջև առկա պատճառահետևանքային կապերը,
- ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների հեռանկարային նպատակադրումների կատարողականի և տնտեսական գործունեության կայուն զարգացման արդյունքների հիման վրա մշակել ռազմավարական հաշվառման ներդրման հայեցակարգ,
- առաջարկել ռազմավարական հաշվառման հատուկ հաշիվներ և կրկնակի գրանցմամբ համապատասխան հաշվապահական թղթակցություններ՝ ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների գործունեության կայուն զարգացման հաշվապահական հաշվառում իրականացնելու նպատակով,
- առաջարկել «բնապահպանություն-սոցիալական վստահություն-կառավարում» (ESG) շղթայով հաշվետվողականության կառուցակարգ,
- կազմակերպությունների գործունեության ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության համադրման դաշտի ձևավորումով

առաջարկել գործարարության հավելյալ արժեքի չափելիության և ռազմավարական հաշվառման կառուցակարգ,

- ռազմավարական հաշվառման տեղեկատվական համակարգի հիման վրա առաջարկել կազմակերպությունների կայուն զարգացումը բնութագրող որակական ցուցանիշներ և դրանք օգտագործել կառավարչական որոշումները իրականացնելիս:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը շարադրված է 123 էջի վրա՝ առանց հավելվածների, և բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից: Ատենախոսությունը պարունակում է 24 աղյուսակ, 18 գծապատկեր, և ներկայացված են թվով 4 հավելվածներ:

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, ինչպես նաև դրանց տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Ռազմավարական հաշվառման ներդրման անհրաժեշտությունը կազմակերպություններում»** գլխում անդրադարձ է կատարվել ՀՀ սննդի արդյունաբերության կառուցվածքին, ռազմավարական հաշվառման մեջ տեղեկատվական դաշտի ձևավորման գործընթացին և այդ համակարգի ներդրման հիմնախնդիրներին:

Առաջին ենթագլխում ատենախոսը ներկայացրել է ՀՀ սննդի արդյունաբերության առանձնահատկությունները, որոնցով այն տարբերվում է արդյունաբերության այլ ճյուղերից՝ այդ ամենը ներկայացնելով սննդի արդյունաբերության մեջ թողարկվող արտադրանքների տեսականիներով ու տեսակարար կշիռներով և արտահանման ու ներմուծման ծավալներով:

Երկրորդ ենթագլխում ներկայացվել են ռազմավարական հաշվառման համակարգի շրջանակներում օգտագործվող տեղեկատվության նշանակությունը, դրա մշակման և հետազոտության մեթոդաբանական գործիքակազմը, որի միջոցով արդեն վերամշակված տեղեկատվությունը հիմք է հանդիսանում կառավարչական և այլ որոշումների կայացման համար: Ներկայացվել է ռազմավարական հաշվառման համատեքստում կազմակերպության ծախսերի հաշվառման և հաշվարկման մի քանի մեթոդաբանական ուղղություններ: Իսկ այս ամբողջ գործընթացի

կարևորությունը ներկայացվել է ռազմավարական վերլուծության և պլանավորման հետ միասին, որոնց ճշգրիտ իրականացումը ատենախոսը պայմանավորել է ռազմավարական հաշվառման համակարգի անխափան և ճշգրիտ գործունեությամբ:

Երրորդ ենթագլխում ներկայացվել է ռազմավարական հաշվառման մեթոդաբանության ճշգրիտ ընտրության կարևորությունը և միջազգային պրակտիկայում օգտագործվող մեթոդաբանական հայեցակարգերի հետազոտությունը, որոնք հիմք են հանդիսանում մեթոդաբանության ամբողջական կիրառության համար: Ատենախոսի կողմից անդրադարձ է կատարվել ռազմավարական հաշվառման համակարգի կողմից օգտագործվող մեթոդներին և դրա ներդրման մասին կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ընդգրկելու ուղիներին ու անհրաժեշտությանը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ռազմավարական հաշվառման ներդրման մեթոդաբանական մեկնաբանումների շրջանակը»** գլխում ներկայացվել են ռազմավարական և ֆինանսական հաշվառման համակարգերի ինտեգրման ուղիները և այդ գործընթացի իրականացման տեղեկատվական ապահովվածության մոտեցումները: Անդրադարձ է կատարվել նաև ռազմավարական հաշվառման համակարգի ներդրման հայեցակարգային հիմնախնդիրներին: Այս գլխում ներկայացվել են ատենախոսության առաջին և երկրորդ գիտական նորույթների տեսամեթոդական հիմքերը:

Առաջին ենթագլխում անդրադարձ է կատարվել կազմակերպություններում ռազմավարական և ֆինանսական հաշվառման համակարգերի փոխկապակցված տարբերակով օգտագործելու հետ կապված խնդիրների վեր հանմանը և տարբերակների քննարկմանը: Այս ենթագլխում անդրադարձ է կատարվել նաև այս գործընթացի կազմակերպման հետ կապված ռիսկերին և այն հնարավորություններին, որոնց կարելի է հասնել այս գործընթացի հաջող կազմակերպման պարագայում:

Երկրորդ ենթագլխում ներկայացվել է կազմակերպության գործունեության ֆինանսական ցուցանիշների և արտաքին ոչ ֆինանսական (մակրոտնտեսական) ցուցանիշների միջև առկա պատճառահետևանքային կապերի նկարագրությունը ռեգրեսիոն վերլուծության միջոցով: Ատենախոսը ցույց է տվել, որ նման վերլուծությունների միջոցով կարող են բացահայտվել մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունների ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա, և կարելի է կանխատեսել կազմակերպության ֆինանսական ցուցանիշների փոփոխությունները պայմանավորված այդ գործոնների ազդեցությամբ:

Երրորդ ենթագլխում դիտարկվել են կազմակերպություններում ռազմավարական հաշվառման համակարգի ներդրման ուղղությունները, որոնցից առաջին ուղղության դեպքում ռազմավարական հաշվառումը իրականացնում է կառավարչական հաշվառման գործառույթները, իսկ երկրորդ ուղղության դեպքում իրականացնում է այն գործառույթները, որոնք գտնվում իր մեթոդաբանության շրջանակներում: Ատենախոսը նաև կատարել է առաջարկություններ կազմակերպություններում այդ գործընթացի ներդրման քայլերի վերաբերյալ:

Ատենախոսության երրորդ՝ **«Ռազմավարական հաշվառման համակարգը կազմակերպությունների կայուն զարգացման համատեքստում»** գլխում քննարկվել են կազմակերպություններում ռազմավարական հաշվառման համակարգի ներդրման հիման վրա պատրաստված համակցված հաշվետվությունների մեթոդաբանական և կազմակերպության գործունեության կայուն զարգացման բաղադրիչների ճանաչման և գնահատման մոտեցումները: Այս գլխում ներկայացվել են ատենախոսության երրորդ և չորրորդ գիտական նորույթների տեսամեթոդական հիմքերը:

Առաջին ենթագլխում ատենախոսը անդրադարձ է կատարել ներկայումս կազմակերպությունների կողմից համակցված հաշվետվությունների հրապարակման անհրաժեշտությանը և դրանում պարունակվող ոչ ֆինանսական տեղեկատվության ներկայացման կարևորությանը: Այս ենթագլխում անդրադարձ է կատարվել նաև այն հիմնահարցին, որը հանրությունը նույնպես ցանկանում է ծանոթանալ կազմակերպությունների գործունեությանը վերաբերյալ տեղեկատվությանը այն մասով, որը սպասարկում է իր շահերը:

Երկրորդ ենթագլխում ներկայացվել են կազմակերպության գործունեության կայուն զարգացման ռեսուրսների և դրանց ձևավորմանը սպասարկող կապիտալի հաշվառման մոտեցումները: Ատենախոսը ներկայացրել թե ինչպես կայուն զարգացման բաղադրիչները պետք է յուրքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում չափման ենթարկվեն և ներկայացվեն համակցված ֆինանսական հաշվետվություններում:

Երրորդ ենթագլխում ատենախոսը ՀՀ սննդի արդյունաբերության ոլորտի կազմակերպության օրինակով ներկայացրել է համակցված ֆինանսական հաշվետվության վերջնական տեսքը «Ֆինանսական վիճակի մասին համապարփակ հաշվետվություն» միջոցով: Բացի այդ, ատենախոսը առաջարկել է կառավարչական հաշվառման նոր հատուկ հաշիվներ, որոնց միջոցով իրականացվելու է այս նոր հաշվետվություններում պարունակվող տեղեկատվության հաշվառումը: Առաջարկվել են նաև ռազմավարական հաշվառման կողմից ուսումնասիրվող տեղեկատվության

գնահատման որակական ցուցանիշներ, որոնց միջոցով կարելի է գնահատել հաշվետու ժամանակաշրջանների կտրվածքով կայուն զարգացման ռեսուրսների փոփոխությունների պատճառները և միտումները, որը կարող է հիմք հանդիսանալ ոչ միայն կառավարչական որոշումների կայացման համար, այլ նաև բարձրացնել մասնավոր և հանրային հատվածին ներկայացվող տեղեկատվության մատչելիությունը, որն էլ ներկայումս պահանջվում է ոչ միայն տեղեկատվական շահառուների, այլ նաև նոր հրատարակվող հաշվապահական հաշվառման ստանդարտների (IFRS-S) կողմից:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը

Ատենախոսությունը իրենից ներկայացնում է սննդի արդյունաբերության կազմակերպություններում ռազմավարական հաշվառման ներդրման մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված կազմակերպությունների կայուն զարգացման նպատակադրումների և հաշվապահական հաշվետվողական գործառույթների բարելավմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպություններում՝ նպաստելով կազմակերպությունների ռազմավարական գործառույթների արդյունավետության բարձրացմանը, տնտեսավարման կայուն զարգացման ու մրցունակության բարձրացմանը և նրանց կողմից իրականացվող կառավարչական որոշումների գործընթացի բարելավմանը:

Ատենախոսության գիտական արդյունքը և նորույթը

Հետազոտության գիտական նորույթը ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպություններում ռազմավարական հաշվառման ներդրման գծով առաջարկությունների ներկայացումն է: Մասնավորապես.

- ՀՀ սննդարդյունաբերության կազմակերպությունների ֆինանսական արդյունքների և սպառողների եկամուտների փոխկապակցված

ուսումնասիրությունների հիման վրա ձևավորվել են ոլորտի զարգացման ռազմավարական ուղղությունները և տրվել են կանխատեսող ռեգրեսիոն գնահատումներ,

- մշակվել է կազմակերպություններում ռազմավարական հաշվառման ներդրման հայեցակարգ՝ հիմնված հեռանկարային նպատակադրումների կատարողականի վերահսկողության և տնտեսական գործունեության կայուն զարգացման գնահատման արդյունքների վրա, որը հնարավորություն է ստեղծում կազմակերպելու ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներով ինտեգրված հաշվետվողականություն,
- կայուն զարգացման հաշվապահական հաշվառում իրականացնելու նպատակով առաջարկվել են ռազամավարական հաշվառման հատուկ հաշիվներ և կրկնակի գրանցմամբ համապատասխան հաշվապահական թղթակցություններ, որոնցով հնարավորություն է ստեղծվում կազմակերպություններում ներդնելու և հաշվետվություններով ներկայացնելու «բնապահպանություն-սոցիալական վստահություն-կառավարում» շղթայով հաշվետվողականություն,
- կազմակերպությունների գործունեության ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության համադրման դաշտի ձևավորումով առաջարկվել է գործարարության արդյունքների չափելիության ռազմավարական հաշվառման կառուցակարգ, որով հնարավորություն է ստեղծվում կիրառելու կայուն զարգացումը բնութագրող որակական ցուցանիշներ և դրա հիման վրա կայացնելու կառավարչական որոշումներ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության նպատակների շարքում նշվել է «բացահայտել առանցքային գործոններ» եզրույթը, որոնք ձևավորում են սննդի արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների զարգացման ռազմավարական ուղղությունները (էջ 5): Սակայն, պարագրաֆ 1.1-ում ներկայացնելով << սննդի արդյունաբերության ոլորտի զարգացման միտումների ընդարձակ վերլուծություն, ատենախոսը դրա հետ մեկտեղ հպանցիկ է անդրադարձել ոլորտի զարգացման ռազմավարական ուղղություններին՝ առանց խորքային գնահատումներ և բացահայտումներ ներկայացնելու:

2. Ատենախոսության մեջ անդրադարձ չի եղել սննդի արդյունաբերության կազմակերպություններում ռազմավարական հաշվառման միջազգային փորձին և ՀՀ-ում լավագույն փորձի ներդրման հնարավորություններին: Այնինչ, միջազգային կազմակերպություններում ռազմավարական հաշվառման առաջավոր փորձի ուսումնասիրությունը կարող էր առավել ամրապնդել ատենախոսի կողմից ներկայացվող հիմնավորումները և նորույթի կետերը:
3. Ատենախոսը որպես ուսումնասիրության օբյեկտ է ընտրել ՀՀ սննդի արդյունաբերության ոլորտի ընդամենը 3 կազմակերպություններ («Ալեքս Էնդ Հոլդինգ» ՍՊԸ, «Բեկոն Պրոդուկտ» ՍՊԸ և «ՄԱՊ» ՓԲԸ) և դրանց ֆինանսական հաշվետվությունների վերլուծությամբ հանգել է որակական եզրահանգումների (հավելվածներ 1-3): Ատենախոսությունը կշահեր, եթե ընդլայնվեր նմանատիպ ուսումնասիրվող կազմակերպությունների շրջանակը, նամանավանդ, որ դրանց թիվը ՀՀ-ում գերազանցում է մի քանի տասնյակը: Այս դեպքում կբարձրանար որակական եզրահանգումների հիմնավորումների աստիճանը:
4. Ատենախոսության սեղմագրում նշվել է, որ հետազոտության արդյունքները հավանության են արժանացել «Կայուն տրանսպորտային համակարգեր» միջազգային գիտաժողովում (Բաթումի 2023թ.): Սակայն ո՛չ ատենախոսությունում, ո՛չ էլ սեղմագրում հղում չի կատարվել գիտաժողովի նյութերին, և վերջինս չի ընդգրկվել օգտագործված գրականության ցանկում:
5. Ատենախոսության տեքստում բազմիցս անդրադարձ է կատարվել ֆինանսական հաշվառման նոր սերնդի ստանդարտների հիշատակմանը (էջեր 69, 82, 91, 109), սակայն ատենախոսը ընդամենը IFRS-S1 և IFRS-S2 ստանդարտների նախագծերն է հիշատակել՝ առանց դրանց ընդլայնված մեկնաբանումների: Կարծում ենք, որ դրա կարիքը կար, քանի որ կատարվող առաջարկությունները սերտորեն առնչվում են նոր սերնդի ֆինանսական հաշվառման ստանդարտներին:
6. Ռազմավարական հաշվառումը հանդիսանում է կառավարչական հաշվառման ուղղություններից մեկը: Ներկայացնելով ռազմավարական հաշվառման նոր հայեցակարգը՝ ատենախոսը հիմնավոր մեկնաբանություններ չի ներկայացնում թե՛ այդ կառուցակարգը կառավարչական հաշվառում է, թե՛ ոչ: Ընդամենը ատենախոսը էջեր 97-ում և 98-ում նշում է, որ կառավարչական հաշվառման նոր հաշիվներն ու հաշվային թղթակցությունները ֆինանսական

հաշվառման հետ ինտեգրման միտում ունեն, որը մեր կարծիքով կարիք ուներ լրացուցիչ մեկնաբանությունների:

7. Գծապատկեր 2.3.1-ում (էջ 61) ներկայացվել է ռազմավարական նպատակադրումների կատարողականի հաշվառման պահանջ: Սակայն ատենախոսությունում դրան անդրադարձ չի կատարվել: Ուստի կարծում ենք, որ նշված գծապատկերը վերախմբավորման կարիք ունի և պետք է ներկայացվեր այն մասով, որ մասով իր կիրառություն է գտել հետազոտությունում:
8. Ատենախոսը ներկայացրել է ինտեգրված հաշվետվության նոր հայեցակարգ (էջեր 99, 100)՝ ընդգծելով այն կարևորագույն հոդվածները, որոնցով պետք է կայացվեն կառավարչական որոշումներ կայուն զարգացման ուղղությամբ, սակայն ատենախոսությունը ամբողջական կլիներ, եթե ներկայացվեին կառավարչական որոշումների կայացման ուղղությունները կամ կառավարչական որոշումների այն համակարգը, որոնք առնչվում են տվյալ հաշվետվությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա, և հետապնդում են ռազմավարական հաշվառման համակարգի ներդրման հետ կապված հիմնախնդիրների բացահայտման և դրանց հաղթահարման ուղիների բարելավման նպատակ: **Գևորգ Հովիկի Մարտիրոսյանի՝ «Ռազմավարական հաշվառման ներդրման հիմնախնդիրները ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում»** թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ վեր են հանվել ռազմավարական հաշվառման համակարգի կարևորությունը և դերը կազմակերպությունների գործունեության կայուն զարգացման շրջանակներում ռեսուրսների օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը տեղեկատվական պահանջարկ ներկայացնող մասնավոր և հանրային հատվածներին տրամադրելու գործում՝ ներառյալ ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպություններում այդ համակարգի բարելավման համար կարևորություն ունեցող խնդիրները: Վերլուծության արդյունքում առաջադրված են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Ատենախոսության հիմնական արդյունքներն

ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված թվով 6 (վեց) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատարակման պահին ընդունելի ու գրախոսվող հանդեսներում և ժողովածուներում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին ու ատենախոսության բովանդակությանը համապատասխան և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Այսպիսով, **Գևորգ Հովիկի Մարտիրոսյանի՝ «Ռազմավարական հաշվառման ներդրման հիմնախնդիրները ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, հեղինակն արժանի է **Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լ. Հ. Գրիգորյան**
28.08. 2023թ.

Լ. Հ. Գրիգորյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**